# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

11 սեպտեմբերի 2025 թվականի թիվ 1864-Ա

## ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 31.07.2025Թ. N 1604-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 31.07.2025թ. «Հողատարածքը համայնքային սեփականություն ճանաչելու մասին» N 1604-Ա որոշման 1-ին կետում կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) «817.1քմ մակերեսով հողատարածք» բառերի փոխարեն կարդալ «611.5քմ մակերեսով հողատարածք» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի սեպտեմբերի 11
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

11 սեպտեմբերի 2025 թվականի թիվ 1865-Ա

## ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 13.03.2025Թ. N 526-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 13.03.2025թ. «Հողատարածքը համայնքային սեփականություն ճանաչելու մասին» N 526-Ա որոշման 1-ին կետը կարդալ նոր խմբագրությամբ՝

1) «Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 0.00343հա մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն, համապատասխանեցնել ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք–1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագծին՝ բնակավայրերի՝ նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման՝ գործառնական նշանակության հողատարածքի՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Ս. Սևանեցու փողոց թիվ 17 / 1 հողամաս հասցե»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի սեպտեմբերի 11
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**


## ՈՐՈՇՈՒՄ

**11 սեպտեմբերի 2025 թվականի թիվ 1866-Ա**

## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 30-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով քաղ. Արկադիկ Ղուկասի Խաչատրյանի դիմումը՝ Գեղարքունիքի մարզի Ծովագյուղի համայնքապետարանի և իր միջև՝ 22.10.2021թ. կնքված՝ Ծովագյուղ գյուղում գտնվող 0.23065հա հողամասի վարձակալության պայմանագիրը /վկայական՝ 27102021-05-0008/ լուծելու մասին, **որոշում եմ.**

1. Լուծել Ծովագյուղի համայնքապետարանի և Արկադիկ Ղուկասի Խաչատրյանի միջև 22.10.2021թ. կնքված՝ Ծովագյուղ համայնքում գտնվող 0.23065հա հողամասի վարձակալության պայմանագիրը:
2. Դադարեցնել անշարժ գույքի վարձակալության պարտավորության և պայմանագրի հաշվառումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի սեպտեմբերի 11
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

11 սեպտեմբերի 2025 թվականի թիվ 1867-Ա

## ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 19.06.2024Թ. N 1378-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 19.06.2024թ. «Բնակելի նշանակության շինությունները սեփական գույք ճանաչելու մասին» N 1378-Ա որոշման 3-րդ և 4-րդ կետերում կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) որոշումից հանել 3-րդ կետը;

2) «Սևան համայնք, ք. Սևան, Կոմիսարների փողոց թիվ 28 հասցեում գտնվող 720քմ մակերեսով հողատարածքին կից՝ 852.3քմ մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն, տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Կոմիսարների փողոց թիվ 28 / 1 հողամաս հասցե, ուղղակի վաճառքի կարգով, հողի կադաստրայի արժեքի 30% վճարելու պայմանով օտարել Մարիամ Ավետիսյանին / հողատարածք՝ 1քմ՝ 563.25 դրամ/» բառերի փոխարեն կարդալ «Սևան համայնք, ք. Սևան, Կոմիսարների փողոց թիվ 28 հասցեում գտնվող 720քմ մակերեսով հողատարածքին կից գտնվող 835.8քմ մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն, տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Կոմիսարների փողոց թիվ 28 / 1 պարիսպ հասցե, ուղղակի վաճառքի կարգով, հողի կադաստրային արժեքի 30% վճարելու պայմանով /հողատարածք՝ 1քմ՝563.25 դրամ/ օտարել Մարիամ Ավետիսի Ավետիսյանին»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի սեպտեմբերի 11
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**11 սեպտեմբերի 2025 թվականի թիվ 1868-Ա**

## ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Ռոմիկ Կյուրեղյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, ք. Սևան, Նաիրյան փողոցի թիվ 143 շենքից արևմուտք հասցեում գտնվող անշարժ գույքի /վկայական՝ 2481054, տրված՝ 30.09.2004թ. / համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 143 շենքից արևմուտք հասցեում գտնվող անշարժ գույքի համար տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 13 / 1 տաղավար հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի սեպտեմբերի 11
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**


## ՈՐՈՇՈՒՄ

**11 սեպտեմբերի 2025 թվականի թիվ 1869-Ա**

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 05-047-0143-0001 կադաստրային ծածկագրով /գ. Ծաղկունք/, 0.08583հա մակերեսով, գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության, այլ հողատեսք՝ գործառնական նշանակության հողամասի նկատմամբ կատարել պետական գրանցում:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03.01.2025թ. N 2-Ա որոշման 4-րդ կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի սեպտեմբերի 11
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

11 սեպտեմբերի 2025 թվականի թիվ 1870-Ա

## ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԵՓԱԿԱՆ ԳՈՒՅՔ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, 10.06.2008 ՀՕ-117-Ն օրենքի 1-ին հոդվածով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշմամբ, հիմք ընդունելով քաղ. Իրինա Բադալյանի դիմումը՝ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի իրեն պատկանող, Գեղարքունիքի մարզ, ք.Սևան, Մյասնիկյան փողոց թիվ 52 հասցեում գտնվող, անհատական բնակելի տան կառուցման համար հատկացված 800քմ մակերեսով հողատարածքում մինչև 2001թ. մայիսի 15-ը կառուցված բնակելի նշանակության շինությունները սեփական գույք ճանաչելու մասին, ինչպես նաև նկատի ունենալով, որ դրանք չեն գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, որոնց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի՝ Իրինա Երվանդի Բադալյանին /ծնված՝ 28.02.1950թ./ պատկանող, Գեղարքունիքի մարզ, ք. Սևան, Մյասնիկյան փողոց թիվ 52 հասցեում գտնվող և փաստացի օգտագործվող 625.6քմ մակերեսով հողատարածքում 1959թ. կառուցված 76.62քմ մակերեսով բնակելի տունը /ներքին մակերեսը՝ 41.58քմ/, 1960թ. կառուցված 16.77քմ մակերեսով խորդանոցը /ներքին մակերեսը՝ 14.86քմ/ ճանաչել Իրինա Երվանդի Բադալյանի սեփական գույքը՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Մյասնիկյան փողոց թիվ 52 բնակելի տուն հասցե:
2. Իրինա Երվանդի Բադալյանին պատկանող, Գեղարքունիքի մարզ, ք. Սևան, Մյասնիկյան փողոց թիվ 52 հասցեում գտնվող 625.6քմ մակերեսով հողատարածքում 2012-2020թթ. կառուցված 20.01քմ մակերեսով բնակելի տունը /ներքին մակերեսը՝ 15.18քմ/ ճանաչել ինքնակամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի սեպտեմբերի 11
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**


## ՈՐՈՇՈՒՄ

**11 սեպտեմբերի 2025 թվականի թիվ 1871-Ա**

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$ հոդվածով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ, հիմք ընդունելով ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք-1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագիծը՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 0.00274հա մակերեսով հողամասը /ք. Սևան/ ճանաչել համայնքային սեփականություն, տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Ա. Գրիբոյեդովի փողոց թիվ 10 / 10 հողամաս հասցե:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03.01.2025թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի սեպտեմբերի 11
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**


## ՈՐՈՇՈՒՄ

**11 սեպտեմբերի 2025 թվականի թիվ 1872-Ա**

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$ հոդվածով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ, հիմք ընդունելով ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք-1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագիծը՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 0.00487հա մակերեսով հողամասը /գ. Լճաշեն/ ճանաչել համայնքային սեփականություն, տրամադրել Սևան համայնք, գ.Լճաշեն, 10-րդ փողոց, թիվ 20 / 1 հողամաս հասցե:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03.01.2025թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
3. . Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի սեպտեմբերի 11
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**11 սեպտեմբերի 2025 թվականի թիվ 1873-Ա**

## ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ, հիմք ընդունելով քաղ. Գուրգեն Սարգսյանի դիմումը՝ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Ս. Սևանեցու փողոց թիվ 8 հասցեում գտնվող անշարժ գույքը /վկայական՝ 17042024-05-0010 / առանձնացնելու և առանձնացված անշարժ գույքերի համար նոր հասցեներ տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Ս. Սևանեցու փողոց թիվ 8 հասցեում գտնվող 0.1357հա մակերեսով անշարժ գույքը, համաձայն ներկայացվող հատակագծերի, բաժանել 2 միավոր գույքի և տրամադրել հասցեներ՝

1) առաջին միավոր գույքի՝ 0.12551հա մակերեսով հողատարածքի և հողատարածքում գտնվող շինությունների համար տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Ս. Սևանեցու փողոց, թիվ 8 բնակելի տուն հասցե;

2) երկրորդ միավոր գույքի 0.01019հա մակերեսով հողատարածքի և հողատարածքում գտնվող շինությունների համար տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Ս. Սևանեցու փողոց, թիվ 8 / 1 տնտեսական շինություն հասցե:

2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի սեպտեմբերի 11
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**11 սեպտեմբերի 2025 թվականի թիվ 1874-Ա**

### ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Հունան Հակոբյանի դիմումը՝ համատեղ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Գեղարքունիքի մարզ, գ. Նորաշեն հասցեում գտնվող անշարժ գույքի /վկայական՝ 987256, տրված՝ 25.05.2002թ. / համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, գ. Նորաշեն հասցեում գտնվող անշարժ գույքի համար տրամադրել Սևան համայնք, գյուղ Նորաշեն, 3-րդ փողոց թիվ 6 / 1 կիսակառույց հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի սեպտեմբերի 11
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

12 սեպտեմբերի 2025 թվականի թիվ 1875-Ա

## ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 14.04.2025Թ. N 759-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 14.04.2025թ. «Հողատարածքը համայնքային սեփականություն ճանաչելու մասին» N759-Ա որոշման 1-ին կետը կարդալ նոր խմբագրությամբ՝

1) «Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 0.01626հա մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն, համապատասխանեցնել ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք–1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագծին՝ բնակավայրերի՝ նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման՝ գործառնական նշանակության հողատարածքի՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Աբովյան փողոց թիվ 11 / 7 հողամաս հասցե»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի սեպտեմբերի 12
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

**12 սեպտեմբերի 2025 թվականի թիվ 1876-Ա**

## ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 14.03.2025Թ. N 546 -Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 14.03.2025թ. «Հողատարածքը համայնքային սեփականություն ճանաչելու մասին» N 546-Ա որոշման 1-ին կետը կարդալ նոր խմբագրությամբ՝

1) «Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 0.00099հա մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն, համապատասխանեցնել ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք–1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագծին՝ բնակավայրերի՝ նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման՝ գործառնական նշանակության հողատարածքի՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 1 / 16 հողամաս հասցե»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի սեպտեմբերի 12
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**12 սեպտեմբերի 2025 թվականի թիվ 1877-Ա**

## ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 24.02.2025Թ. N411-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 24.02.2025թ. «Հողատարածքը համայնքային սեփականություն ճանաչելու մասին» N 411-Ա որոշման 1-ին կետը կարդալ նոր խմբագրությամբ՝

1) «Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 0.12529հա մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն, համապատասխանեցնել ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք–1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագծին՝ բնակավայրերի՝ նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման՝ գործառնական նշանակության հողատարածքի՝ տրամադրելով Սևան համայնք, գ. Լճաշեն, 17-րդ փողոց թիվ 1 հողամաս հասցե»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի սեպտեմբերի 12
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

12 սեպտեմբերի 2025 թվականի թիվ 1878-Ա

## ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 21.05.2025Թ. N1036-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 21.05.2025թ. «Հողատարածքը համայնքային սեփականություն ճանաչելու մասին» N 1036-Ա որոշման 1-ին կետը կարդալ նոր խմբագրությամբ՝

1) «Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 0.00442հա մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն, համապատասխանեցնել ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք–1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագծին՝ բնակավայրերի՝ նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման՝ գործառնական նշանակության հողատարածքի՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 181 / 54 հողամաս հասցե»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի սեպտեմբերի 12
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**12 սեպտեմբերի 2025 թվականի թիվ 1879-Ա**

## ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 15.05.2024Թ. N1066-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Ուժը կորցրած ճանաչել Սևան համայնքի ղեկավարի՝ 15.05.2024թ. «Բնակելի նշանակության շինություններն ինքնակամ ճանաչելու մասին» N 1066-Ա որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի սեպտեմբերի 12
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**


## ՈՐՈՇՈՒՄ

**12 սեպտեմբերի 2025 թվականի թիվ 1880-Ա**

## ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ) ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, Սևան համայնքի ավագանու՝ 19.11.2024թ. N146-Ն որոշման 2-րդ կետի և հաշվի առնելով քաղ. Միսաք Պետրոսյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Ձևակերպել կառուցապատող Միսաք Պետրոսյանի կողմից իրականացված՝ Սևան համայնք, ք. Սևան, Սայաթ-Նովայի փողոց թիվ 14 / 4 հասցեում գտնվող հողատարածքում կառուցված երկհարկանի առևտրի սրահի շահագործման թույլտվությունը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի սեպտեմբերի 12
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

12 սեպտեմբերի 2025 թվականի թիվ 1881-Ա

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 27.04.2006թ. «ՀՀ կառավարության՝ 2001թ. ապրիլի 12-ի թիվ 286-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 844-Ն որոշման 1-ին կետի 6-րդ ենթակետով, հիմք ընդունելով քաղ. Վահագն Ստեփանյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Գործարանային փողոց թիվ 8 հասցեում գտնվող անշարժ գույքի /վկայական՝ N 26062025-05-0030/ զբաղեցրած 0.4հա մակերեսով տարածքն ընդլայնելու մասին, հաշվի առնելով, որ նշված հողատարածքը չի հանդիսանում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողատարածք, **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան Գործարանային փողոց թիվ 8 հասցեում գտնվող 0.4հա մակերեսով հողատարածքն ընդլայնելու նպատակով Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Գործարանային փողոց թիվ 8 / 12 հասցեում գտնվող 0.3381հա մակերեսովհողատարածքը /վկայական՝ N 28082025-05-0058/ ուղղակի վաճառքի կարգով, հողի կադաստրային արժեքը՝ յուրաքանչյուր 1քմ՝ 2887.5դրամ, վճարելու պայմանով օտարել Վահագն Վանիկի Ստեփանյանին:
2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման հողի կադաստրային արժեքը մուծելուց հետո :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի սեպտեմբերի 12
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**12 սեպտեմբերի 2025 թվականի թիվ 1882-Ա**

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$ հոդվածով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ, հիմք ընդունելով ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք-1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագիծը՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 47.21քմ մակերեսով հողամասը /ք. Սևան/ ճանաչել համայնքային սեփականություն, տրամադրել Սևան համայնք, գ. Գագարին, Գայի փողոց, 3 շենք թիվ 10 բնակարան հասցե։
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03.01.2025թ. N 2-Ա որոշման 1-ին կետի։
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից։

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի սեպտեմբերի 12
ք.Սևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ**
**ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

**12 սեպտեմբերի 2025 թվականի թիվ 1883-Ա**

## ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻՆՔՆԱԿԱՄ ԳՈՒՅՔ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, 10.06.2008թ. ՀՕ-117-Ն օրենքի 1-ին հոդվածով, ՀՀ Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ, հիմք ընդունելով քաղ. Վարազդատ Սարիբեկյանի դիմումը՝ Վարազդատ Սարիբեկյանին անհատական բնակելի տան կառուցման համար Վարսեր գյուղում հատկացված 1200քմ մակերեսով հողատարածքում մինչև 2001թ. մայիսի 15-ը կառուցված բնակելի նշանակության շինությունները ինքնակամ գույք ճանաչելու մասին, նկատի ունենալով, որ դրանք չեն գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, որոնց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Վարազդատ Մնացականի Սարիբեկյանին /ծնված 28.12.1961թ./ անհատական բնակելի տան կառուցման համար Գեղարքունիքի մարզի Վարսեր գյուղում հատկացված 1200քմ մակերեսով հողատարածքին կից գտնվող գտնվող 240քմ մակերեսով հողատարածքի նկատմամբ ճանաչել Վարազդատ Սարիբեկյանի սեփական գույքը:
2. Վարազդատ Սարիբեկյանին պատկանող 1440քմ մակերեսով հողատարածքում 1995թ. կառուցված 196.1քմ մակերեսով կիսակառույց բնակելի տունը /ներքին մակերեսը՝ 170.3քմ/ ճանաչել ինքնակամ՝ տրամադրելով Սևան համայնք, գ. Վարսեր, 11-րդ փողոց թիվ 68 կիսակառույց հասցե:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի սեպտեմբերի 12
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**12 սեպտեմբերի 2025 թվականի թիվ 1884-Ա**

## ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության գլխավոր քարտուղարի դիմումը՝ ք. Սևան, առագաստանավային բազայից արևմուտք հասցեում գտնվող անշարժ գույքի /վկայական՝ 1408982, տրված՝ 13.05.2004թ. / համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Ք. Սևան, առագաստանավային բազայից արևմուտք հասցեում գտնվող անշարժ գույքի համար տրամադրել՝Սևան համայնք, ք. Սևան, Երևանյան փողոց թիվ 10 / 5 վարչական շենք հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի սեպտեմբերի 12
ք.Սևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ**
**ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

**12 սեպտեմբերի 2025 թվականի թիվ 1885-Ա**

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. N2387-Ն, 18.05.2006թ. N731-Ն որոշումներով, ՀՀ կառավարության՝18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 3-րդ, 33-րդ կետերով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$ հոդվածով, հիմք ընդունելով քաղ. Սամվել Խաչատրյանի դիմումը՝ համատեղ սեփականության իրավունքով Սամվել Խաչատրյանին և Կարինե Սիմոնյանին պատկանող, ք. Սևան, Աբովյան փողոց թիվ 9 / 38 հասցեում գտնվող խանութին կից՝ ինքնակամ կառուցված 73.68քմ մակերեսով խանութը, 3.98քմ մակերեսով ծածկն օրինականացնելու մասին, ինչպես նաև հաշվի առնելով, որ շինությունը կառուցված է համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա, որի նկատմամբ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումներ չկան, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ**.

1. Քաղ. Սամվել Բախշու Խաչատրյանի և Կարինե Ջանիբեկի Սիմոնյանի կողմից՝ ք. Սևան, Աբովյան փողոց թիվ 9 / 38 հասցեում գտնվող խանութին կից՝ ինքնակամ կառուցված 73.68քմ մակերեսով խանութը /ներքին մակերեսը՝ 54.93քմ/, 3.98քմ մակերեսով ծածկը, զբաղեցրած ու սպասարկման համար նախատեսված 77.7քմ մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն, հողամասի գործառնական նշանակությունը համարել փոփոխված՝ բնակավայրի ընդհանուրից՝ բնակավայրի հասարակական կառուցապատման:
2. Սամվել Խաչատրյանի և Կարինե Սիմոնյանի կողմից ինքնակամ կառուցված 73.68քմ մակերեսով խանութը, 3.98քմ մակերեսով ծածկը ճանաչել օրինական /հաշվառման տեղեկանք՝ 20233TPPP2S/՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Խ.Աբովյան փողոց թիվ 9 / 39 խանութ հասցե:
3. Նկատի ունենալով, որ թույլ է տրվել ինքնակամություն, ուստի ինքնակամ կառույցի օրինականացման ծախսերն իրականացվում են ինքնակամ կառույցն իրականացնողի միջոցներով, պետական գրանցման, այդ թվում՝ համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03.01.2024թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:

4. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերի ամբողջ գումարը քաղաքացու կողմից Սևան համայնքի բյուջե վերականգնելուց հետո:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի սեպտեմբերի 12
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**


## ՈՐՈՇՈՒՄ

**12 սեպտեմբերի 2025 թվականի թիվ 1886-Ա**

### ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Դավիթ Գասպարյանի դիմումը՝ Գեղարքունիքի մարզ, գ. Վարսեր hասցեում գտնվող անշարժ գույքի /կադաստրային ծածկագիր՝ 05-086-0012-0008/ համար նոր hասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, գ. Վարսեր hասցեում գտնվող անշարժ գույքի համար տրամադրել Սևան համայնք, գյուղ Վարսեր, 11-րդ փողոց թիվ 40 հողամաս hասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի սեպտեմբերի 12
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

12 սեպտեմբերի 2025 թվականի թիվ 1887-Ա

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 27.04.2006թ. «ՀՀ կառավարության՝ 2001թ. ապրիլի 12-ի թիվ 286-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 844-Ն որոշման 1-ին կետի 6-րդ ենթակետով, հիմք ընդունելով քաղ. Անի Պողոսյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Մյասնիկյան փողոց թիվ 54 / 1 հասցեում գտնվող անշարժ գույքի /վկայական՝ N 31082020-05-0035/ զբաղեցրած 0. 0377հա մակերեսով տարածքն ընդլայնելու մասին, հաշվի առնելով, որ նշված հողատարածքը չի հանդիսանում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողատարածք, **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Մյասնիկյան փողոց թիվ 54 / 1 հասցեում գտնվող 0.0377հա մակերեսով հողատարածքն ընդլայնելու նպատակով Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Ա. Մյասնիկյան փողոց թիվ 54 / 2 հասցեում գտնվող 0.00314հա մակերեսովհողատարածքը /վկայական՝ N 28082025-05-0035/ ուղղակի վաճառքի կարգով, հողի կադաստրային արժեքը՝ յուրաքանչյուր 1քմ՝ 4441.8 դրամ, վճարելու պայմանով օտարել Անի Ավետիքի Պողոսյանին:
2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման հողի կադաստրային արժեքը մուծելուց հետո :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի սեպտեմբերի 12
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

**12 սեպտեմբերի 2025 թվականի թիվ 1888-Ա**

## ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ և 12-րդ հոդվածի 7-րդ կետի, Սևան համայնքի ավագանու՝ 19.11.2024թ. N146-Ն որոշման 1-ին կետով սահմանված 1 հավելվածի 12-րդ կետի դ) ենթակետի, հիմք ընդունելով «Իմիջ Մ. Գ.» ՍՊԸ -ի տնօրենի հայտը՝ **որոշում եմ.**

1. «Իմիջ Մ. Գ.» ՍՊԸ-ին / գործունեությունը՝ ք. Սևան, Նաիրյան փ., Կոնվերս բանկի դիմաց հասցե / տրամադրել 01.09.2025-30.09.2025թ,թ. ժամանակահատվածի համար՝ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն՝ Սևանի համայնքի բյուջեի 900165101503 հաշվեհամարին վճարելով տեղական տուրք՝ 54.000 դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առձեռն կամ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի սեպտեմբերի 12
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

**12 սեպտեմբերի 2025 թվականի թիվ 1889-Ա**

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին»օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման և հիմք ընդունելով ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գլխավոր քարտուղարի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Սևանի տրանսպորտային հանգույցի հիմնանորոգման աշխատանքների կառուցման համար ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը տրամադրված Սևան համայնքի ղեկավարի՝ 24.09.2024թ. N 134 շինարարության թույլտվության ժամկետը երկարաձգել 2 ամիս ժամկետով:
2. ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը պարտավոր է շինարարական աշխատանքներն ավարտելուց հետո՝ բայց ոչ ուշ, քան շինարարության թույլտվության ժամկետը լրանալուց 30 օր առաջ, դիմել Սևան համայնքի ղեկավարին՝ ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար, հակառակ դեպքում՝ կենթարկվի վարչական պատասխանատվության օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պաշտաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի սեպտեմբերի 12
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**12 սեպտեմբերի 2025 թվականի թիվ 1890-Ա**

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$ հոդվածով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ, հիմք ընդունելով ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք-1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագիծը՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 0.00730հա մակերեսով հողամասը /գ. Լճաշեն/ ճանաչել համայնքային սեփականություն, տրամադրել Սևան համայնք, գ. Լճաշեն, 10-րդ փողոց թիվ 13 / 1 հողամաս հասցե:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03.01.2025թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի սեպտեմբերի 12
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

12 սեպտեմբերի 2025 թվականի թիվ 1891-Ա

## ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45 -րդ հոդվածի 1-ին մասի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ և 12-րդ հոդվածի 7-րդ կետի, Սևան համայնքի ավագանու՝ 19.11.2024թ. N146-Ն որոշման 1-ին կետով սահմանված 1 հավելվածի 12-րդ կետի դ) ենթակետի, հիմք ընդունելով «Իմիջ Մ. Գ.» ՍՊԸ -ի տնօրենի հայտը՝ **որոշում եմ.**

1. «Իմիջ Մ. Գ.» ՍՊԸ-ին / գործունեությունը՝ ք. Սևան, Նաիրյան փ. հասցե / տրամադրել 01.09.2025-30.09.2025թ.թ. ժամանակահատվածի համար՝ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն՝ Սևանի համայնքի բյուջեի 900165101503 հաշվեհամարին վճարելով տեղական տուրք՝ 54.000 դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առձեռն կամ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի սեպտեմբերի 12
ք.Սևան